

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ
ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Գ. Մինասյան	ՀՀ ԱԺ-ի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Ա. Մինասյան	ՀՀ ԱԺ-ի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Տ. Հարությունյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի քարտուղար)
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Ի. Զարգարյան	ՀՀ վարչապետի խորհրդական
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն
Վ. Կարապետյան	«ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Մարտիրոսյան	«Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ

Վ. Սաֆարյան	«Հայրենական ապրանք արտադրողների միություն» ՀԿ-ի նախագահ, ՀՀ հանրային խորհրդի ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ
Բ. Ենգիբարյան	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն
Ր. Մեխջյան	«Հայաստանի Հանրապետության արտահանողների միություն» ՀԿ-ի նախագահ
Դ. Բոթ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի ղեկավար
Մ. Հերզնյան	«Ի-Վի Քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն
Ա. Հարությունյան	«Հայ գինեգործների միություն» ՀԿ-ի նախագահ
Ս. Բեկիրսկի	«Հայաստանի Հանրապետության թեթև արդյունաբերության գործատուների միություն» ՀԿ-ի համանախագահ
Ս. Զաքարյան	«Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միություն» իրավաբանական անձանց միության տնօրեն
Է. Գրիգորյան	Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միության նախագահ
Ա. Սալաթյան	«Նեյշնլ Ինստրումենտս Արմենիա» ընկերության տնօրեն
Գ. Աբրահամյան	«Դի Սի Էյ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ
Ս. Մաթևոսյան	«Լիկվոր» ՓԲԸ-ի տնօրեն
Ա. Պետրոսյան	«ՄԱՊ» ՓԲԸ-ի նախագահ
Հ. Միրզոյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի արդյունաբերության քաղաքականության վարչության պետ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ
Գ. Գյուլումյան	ՀԲ-ի երևանյան գրասենյակի ավագ տնտեսագետ
Լ. Շահրամանյան	թարգմանչուի

1. Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքի մասին

(Տ. Դավթյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանի զեկուցումը՝ Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքի մասին.

2) առաջարկել ՀՀ ԱԺ-ի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Մինասյանին իր իսկ առաջարկած Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգը դիտարկել արդյունաբերության քաղաքականության ներքո տնտեսության 11 ճյուղերի ընտրության մեթոդաբանության տեսանկյունից:

2. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման մասին

(Տ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տ. Հարությունյանի զեկուցումը՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման մասին.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ «Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն Մ. Հերզնյանի հետ համատեղ հաջորդ նիստին ներկայացնել հայեցակարգում ամրագրված թիրախների համար մոնիթորինգի համակարգի ձևավորման վերաբերյալ առաջարկություն.

3) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տ. Հարությունյանին՝

1) Թեթև արդյունաբերության 2013-2023 թվականների ոլորտային ռազմավարական նախագիծը ներկայացնել ՀՀ ԱԺ-ի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Մինասյանին.

2) այսուհետ կայք-էջում առանձնացնել «Նախագծեր» բաժին և այնտեղ տեղադրել բոլոր նախագծերը:

3. Դեղագործության և բիոտեխնոլոգիաների և կոնյակագործության ոլորտային ռազմավարությունների իրականացումն ապահովող գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի մասին

(Ռ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Չարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Հարությունյանի զեկուցումը՝ Դեղագործության և բիոտեխնոլոգիաների և կոնյակագործության ոլորտային ռազմավարությունների իրականացումն ապահովող գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

4. Ճշգրիտ ճարտարագիտության 2012-2015 թվականների գործողությունների ծրագրի քննարկում և հաստատում

(Տ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Ճշգրիտ ճարտարագիտության 2012-2015 թվականների գործողությունների ծրագիրը.

2) ընդունել ի գիտություն արդեն իսկ ընդունված ոլորտային ռազմավարություններում ամրագրված ծախսային ծավալներն և ճշգրտումները կատարել ընթացիկ տարում՝ ըստ անհրաժեշտության:

5. Գինեգործության ոլորտի 2012-2020 թվականների ռազմավարության և 2012-2015 թվականների գործողությունների ծրագրի քննարկում և հաստատում

(Տ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Գինեգործության ոլորտի 2012-2020 թվականների ռազմավարության և 2012-2015 թվականների գործողությունների ծրագիրը.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ ոլորտային քարտուղարությունում քննարկել «Հայաստանի Հանրապետության արտահանողների միություն» ՀԿ-ի նախագահ Ռ. Մելիքյանի առաջարկությունը և ըստ այդմ ներկայացնել առաջարկություն:

6. Ոսկեգործության, ժամագործության և ադամանդագործության ոլորտային ռազմավարությունների և վերջիններիս իրականացումն ապահովող 2012-2015թթ. գործողությունների ծրագրի նախագծի ներկայացում

(Մ. Հերզնյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն Ոսկեգործության, ժամագործության և ադամանդագործության ոլորտային ռազմավարությունների և վերջիններիս իրականացումն ապահովող 2012-2015թթ. գործողությունների ծրագրի նախագծերի մշակման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

7. ՀՀ կառավարության և ճշգրիտ ճարտարագիտության, գինեգործության ոլորտների ներկայացուցիչների միջև ճշգրիտ ճարտարագիտության, գինեգործության ոլորտային ռազմավարությունների իրականացման վերաբերյալ հուշագրերի քննարկում և ստորագրում

(Տ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

ՀՀ կառավարության և ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի ներկայացուցիչների միջև ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի, ինչպես նաև ՀՀ կառավարության և գինեգործության ոլորտի ներկայացուցիչների միջև գինեգործության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ հուշագրերը ստորագրվեցին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ